

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բալդվինի եկապեղիցիալի վերադարձը.—„Morgenblatt“-ի մէջ տպուած է Բալդվինի տուած հեռագիրը, որով նա յայտնում է, թէ նրա ջանքերը թափանցելու հիւսիսային բևեռը ապարդիւն անցան։ Բայց Բալդվինը չի յուսահատւում և մտադրութիւնը ունի 1903 թ. շարունակելու իւր ճանապարհորդութիւնը գէպի հիւսիսային բևեռը։ Բալդվինը կառուցել է երեք մեծ պահեստներ, որոնք պէտք կդան յաջորդ հետազօտութեան համար։ Գրանց Յովաէփի երկրի մօտի տարածութիւնը 1901 թ. աշնանը բռնուած էր սառուցով, այնպէս որ շողենաւը չէր կարող անցնել։ Եկապեղիցիան ըոլոր իւր պաշարն ու քարածուխը սպառեց. ձիերի և շների ու տեկլքն էլ համարեա ըոլուցովին վերջացել էր, և նա ստիպուած էր վերադառնալ։ Բալդվինը վերցրել է բևեռային լիեանքից մի քանի կինքմատօգը քիական պատկերներ։ Նա հասել է հիւս. լայն. 81<sup>0</sup> և 44<sup>1</sup>:

Լուսնի մասին.—Յայտնի է, որ մեր երկրի արքանեակը՝ լուսնը, համեմատած միւս մոլորակների հետ, շատ և շատ մօտ է գտնւում մեր երկրադնտին, ու սակ և աստղաբաշխները խոշոր հեռագիտակիների օգնութեամբ այս մոլորակի մակերեսոյթը շատ բաւարար կերպով ուսումնասիրել են։ Ամէնքի համար հետաքրքրական մի հարց կլինի ուրեմն, թէ ինչ մեծութեան է այն ամենափոքր առարկան, որ ներկայումս հեռադիտակիների միջոցով լուսնի վրայ կարող ենք տեսնել։

Այս հարցը շատ է զբաղեցրել յայտնի աստղաբաշխ Պէկկերին գին, որ առանձին եռանդով տարիներ շարունակ զիտել է լուսնի նը շատ խոշոր հեռադիտակով. գիտողութիւնների համար նա ընտրել էր Պերուի Անգերերի վրայ (1,228 սաժ. բարձր ծովի մակերեսոյթից) գտնուող գիտարանը, որտեղ չափազանց մաքուր, թափանցիկ և հանդարտ օդ է լինում։ Ինքը զիտողը հաւատացնում է, որ երբէք ոչ մի աստղաբաշխ լուսինը այնքան պարզութեամբ և որոշակի չի տեսել, որչափ ինքը. նրա հաշուելով գուրս է գալիս, որ իւր հեռադիտակի օգնութեամբ լուսինը այնպէս պարզ կարելի է տեսնել, ինչպէս ուրիշ մարդիկ հասարակ ացքով կարող

էին տեսնել, եթե լուսինը խոկականից հարիւր անգամ աւելի մօտիկ լինէր մեղ:

Ամենափոքր առարկան, որ Պէկկերինզը բոլորովին պարզ տեսնել է լուսնի վրայ, ունեցել է 180 մետր (90 սաժ.) տրամագիծ:

Ներկայումս գոյութիւն ունեցող հեռագիտականերից ամենամոշորը, որ գտնւում է Հելւսիսային Ամերիկայի ամենագլխաւոր դիտարանում, պարզ եղանակին լուսնի մակերևոյթի վրայ կարող է ցոյց տալ 100 մետր տրամագիծ ունեցող առարկաներ, իբրև փոքրիկ կէտեր:

Սրանից հետեւում է, որ երկրիս ամենամեծ շինութիւնները, ինչպէս օրինակ Հռոմի Պողոս—Պետրոսի տաճարը և ուրիշ հոկայական շինութիւններ, լուսնից նոյն հեռադիտակող փոքրիկ կէտերի չափ կերպեային: Զիկագոի և Քերլինի պէս մեծ քաղաքների ծաւալի կողմից կրած զգալի փոփոխութիւնները պէտք է որ նկատելի լինէին լուսնի բնակիչների համար, ինչպէս և լուսնի մակերևոյթի արտաքին ձևի փոփոխումները մենք էլ կնկատենք. բայց երօք մինչեւ օրս լուսնի վրայ այնպիսի բան չի նկատուել, որ ապացուցանի թէ բանաւոր էակներ են ապրում այնտեղ: Ընդհակառակն, բոլոր եղբակացութիւնները պարզ ցոյց են տալիս որ մարդու նման կենդանի արարածներ այնտեղ ոչ միայն չկան, այլ և չեն էլ կարող լինել:

Յայտնի է, որ լուսնի վրայ չկան իրար հետ միացած ջրային տարածութիւններ, ոչ էլ ծովեր, գետեր և մթնոլորտ: Այսպիսով օդով չնչող էակները լուսնի վրայ չեն դառնի իրանց գոյութեան ամենամհանցածեցտ պայմանը:

Ինչ վերաբերում է այն բանին, թէ արդեօք լուսնի վրայ, երբ այնտեղ ջուր և օդ կար, կենդանի էակներ կային, —արդէն սւրիշ հարց է, որ մենք ոչ կարող ենք հաստատել, ոչ էլ մերժել, քանի որ նրանց դոյութեան անհերքելի հետքեր չենք նկատում:

Մեզ միայն յայտնի է, որ լուսնի վրայ բարեխառնութեան պայմանները չափազանց ինքնուրոյն են: որ առաջ է դալիս մըթնոլորտի բացակայութիւնից, բացի օրանից, լուսնի մակերևոյթի իւրաքանչիւր կողմը 15 օր չարունակ արելից տաքանում է, իսկ յետոյ նոյնքան ժամանակ խաւարի մէջ է ընկղմուում: Հերշելը ենթագրում է, որ 15 օր չարունակ տաքանալուց լուսնի մակերևոյթը չափազանց տաքանում է, իսկ էրիկսնը, ընդհակառակն, պնդում է, որ թէպէտ արելը այդքան երկար ժամանակ անընդհատ լուսաւորում է լուսինը, բայց և այնպէս այդ ժամանակ էլ լուսնի վրայ չափազանց ցուրտ պիտի լինի՝ մթնոլորտի և ուրիշ պայմանների բացակայութեան չնորհիւ, որոնց կարելի է մեր լեռ-

նաշղթաների ձիւնապատ գագաթների վերայ տիրող պայմաններին համեմատել:

Միայն ամենավերջին ժամանակներս ամերիկացի Ֆրանկ Գերեն իւր հետազօտութիւններով կարողացաւ վճռել այս վեճելի հարցը: Ամէնից առաջ նա հետազօտեց երկրի ձիւնապատ հարթութիւնների տաքութեան ճառագայթները, յետոյ ուսումնասիրեց զանազան տեսակ քարերի անդրագարձման ոյժը և վերջապէս գտաւ, թէ երկրիս մթնոլորտը ինչպէս է ներդործում տաքութեան ճառագայթների թափանցելու վրայ. այս ճանապարհով հետևեալ եզրակացութիւններին յանդաւ:

Լուսնի վրայ բարեխառութիւնը գեշերով սառչելու կէտից 180° ցած է իջնում, մի քան, որ երկրագնտիս մակերեռյթի վրայ ոչ մի տեղ չի լինում: Արևագալին բարեխառութեան աստիճանը այդքան է ցոյց տալիս, որից յետոյ քիչ—քիչ բարձրանում է, իսկ կէսօրին, երբ արեւ ամենաբարձր կէտին է հասնում: բարեխառութիւնը բարձրանում է 10°: սա նշանակում է թէ լուսնի մակերեռյթը եռացած ջրի բարեխառութիւնից էլ շատ է տաքանում: Երբ արեւը թեքւում է գէպի արեւմուտք, բարեխառութիւնը արագութեամբ իջնում է այնպէս, որ գեռ տրեշմտած՝ սառչելու սահմանից էլ իջնում է: Սրանից պարզ հետեւում է, որ լուսնի մակերեռյթի այն տեղերում, որտեղ կէսօրին արեւ հորիզոնից շատ է բարձրանում, այն աստիճանի սաստիկ շոգ է լինում, որ դերագանցում է հռացող ջրի բարեխառութեան և միայն ծայրի բարեռային երկրները օրուայ ընթացքում այնպիսի բարեխառութիւն ունին, որ տանելի է մարդկային էակների համար: Բայց հազիւ թէ լուսնի վրայ գեշեր ժամանակ որևէ միջոց հնարաւոր լինի կենդանի մարմնի կեանքը պահպանել մեռելային ցըտից: Այս բռլորի շնորհիւ լուսնի վրայ բարձր տեսակի բոյսեր էլ չեն կարող լինել, որովհետեւ թէ կէսօրաւայ սաստիկ շոգից կոչչանային և թէ գեշերուայ աներեւակայելի ցըտութիւնից: Էլ չենք կըկնում, որ լուսնի վրայ ո՛չ ողկայ և ոչ էլ ջուր:

Եւ այսպէս, լուսնի մակերեռյթը մեռելային, անջրդի անապատ է, որ ցերեկով տոչորդում է արեւի այրող ճառագայթների տակ, իսկ գեշերով նոյն մակերեռյթը անսովոր սառնամանիքների է ենթարկեռում՝ սառնամանիքների: Որոնք անհամեմատ աւ ելի դժգան են Սիրիրի ամենահիւսիսային հարթութիւնների ձմեռուայ սառնամանիքներից:

Հրաբխային գործունեութիւնը լուսնի վրայ.—Եթէ հաւատանք յիշեալ աստղաբաշխ պրոֆէսոր Պիկկերինդին, ներկայումս լուսնի վրայ ահագին յեղափոխութիւն է կատարվում, որ միշտ բարեյաջող հետեանքներ չեն ունենում: Մեր երկրի հաւատարիմ արքանեակի վրայ այնպիսի երևոյթներ են տեղի ունենում, որոնք ապացուցանում են, թէ կեանքը վերջնականօքէն հանգած չէ նրա վրայ: Հեն հրաբխային բերանները անյայտանում են, նորերը յայտնեում են. այստեղ—այնտեղ սկսում են կազմուել զարմանալի սպիտակ քծեր, որոնք կարող են սառուցի և ձիւնի տեղընդունուել: Լուրջ ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ հրաբխային բերանները մոլորակի վրայ փոփոխում են, այն ինչ հազարաւոր տարիներ շարունակ մենք սովորել ենք լուսինը մեռած և հանգած համարել: Պիկկերինդի կարծիքով լուսնի վրայ ներկայումս նկատելի է չափազանց սաստիկ հրաբխային գործունէութիւն և գետնի տատանում: Որոնք ամենայն հաւանականութեամբ մի քանի տարի կշարունակուեն: Եթէ լուսինը յաջողութեամբ գուրս գայ այդ ճնշաժամից և ազատուի կտոր—կտոր լինելուց, այն ժամանակ նա կվերածնուի և աւելի կատարեալ ձև կրնգունի՝ բռւսականութեամբ կծածկուի և ամէն տեսակ կենդանական ցեղերի համար ընտակարան կդառնայ: Արդէն ձիւնի և սառոցի երեալը լուսնի ապագայ կեանքի համար նոր շրջան է ստեղծում, որովհետեւ այդ նշանակում է, թէ նրա շուրջը կազմուել է մթնոլորտ: Հասոարակածին մօտ գտնուած մի քանի տեղ Պիկկերինդը հէնց հիմա գտել է ինչ որ կանաչ քան, որ պէտք է բռւսականութիւն լինի: Նրա տաելով, այս կանաչը անընդհատ մեծանում է և թերեւս, մի քանի տարուց յեաոյ, երբ հրաբուխները կվերջացնեն իրենց զօրեզ գործունէութիւնը, կծածկի լուսնի ամբողջ տեսանելի մակերեսոյթը: Իհարկէ, ներկայումս լուսնի վրայ չկան ոչ գաղաններ, ոչ էլ մարդիկ, բայց Պիկկերինդը ամենենեն չի կատարում, որ նրանք կերեան այնտեղ. նա ընդունում է նմանապէս: որ լուսնի վրայ իենդանական կեանքը աւելի առաջ գոյութիւն ունէր, քան երկրիս վրայ յայտնուեցաւ առաջին մամօնտը: Իբրև եղբակացութիւն նա տալիս է մի տեսութիւն, որը նրա կարծիքով հաստատում է լուսնի վրայ կատարուող երեսոյթներով: Նա ենթագրում է, որ մոլորակների վրայ ժամանակի ընթացքում իւրաքանչիւր օրգանական կեանք մեռնում է, և որ նախկին կենդանի տարրերը մի քանի միլիոն տարիների ընթացքում տարածութեան մէջ թափառում են նոր ոյժերով նոր կեանքի համար վերածնուելու: Այն ժամանակ հանգած հրաբուխները նորից բորբոքում են, կեղեց պատռում է,

և հսաւուրց մոլորակը, Փիւնիկի նման, կը ակե հեղեղներով ոռոգուած՝ նորից վերածնեռում է:

Ամերիկացի հնդիկները նրաւերքում.—Մեացեալ նահանգների նախադահը մեծ հրաւերք ունէր: Հրաւիրուածների մէջ կային և մի քանի հնդիկ առաջնորդներ: Ճոխ ընթրիքն կազմրամորթները իրանց շատ ժանր էին պահում և ոչ մի կերպ չէին ցոյց տալիս, թէ իրանց համար անսովոր շրջանի մէջ են գտնուում: Նրանք անշարժ նստել էին իրանց տեղերը, քիչ էին խօսում և շատ ուտում: Երիտասարդ հնդիկ առաջնորդներից մէկը նկատում է, որ սպիտակները իրանց ափսէների վրայ ինչ որ անծանօթ կերպակրից վերցրին, դա մանանելի էր: Ցեսնելով, որ սպիտակները նրանից շատ քիչ են վերցնում, նա եղբակացնում է, որ ուրեմն դա չափազանց հազուագիւտ և թանգ կերպակուր պէտք է լինի: Նա հետաքրքրութեամբ վերցնում է բաւականաչափ բաժին այս անժանօթ կերպակրից և միանգամբ տանում բերանը: Նոյն վայրկեանին նա զգում է, որ լեզուն սաստիկ այրւում է, բայց ամենաանխոռվ տեսքով քաջութեամբ կուլ է տալիս սարսափելի մանանեխը: Բայց այդքան հեշտ չէր արտասուբները պահել, որոնք մէկը միւսի հետևեցից թափւում էին նրա կարմիր թշերի վրայ: Նրա մօտ նստած ծեր հնդկացին տեսնելով այս բանը, հարցնում է, թէ ինչո՞ւ համար է լաց լինում:

— Ես լալիս եմ, պատասխանեց երիտասարդ առաջնորդը, որովհետեւ յիշեցի, թէ ինչպէս մի տարի առաջ խեղճ հայրս խեղդուեց Հուրօն լճի ալիքների մէջ:

— Ծեր հնդիկը ոչինչ չպատասխանեց, բայց ինըն էլ վերցրեց մանանելի բաւական մեծ բաժին և ձգեց բերանը՝ ընկնելով իւր հարեւնի պէս օրհասական վիճակի մէջ:

— Դու ինչու համար ես լաց լինում, իւր կողմից նենդութեամբ հարցրեց երիտասարդ հնդիկը:

— Ես լաց եմ լինում նրա համար, հանդարտութեամբ վրայ բերեց ծերուկը, թէ ինչո՞ւ դու էլ հօրդ հետ միասին չխեղդուեցալ Հուրօն լճի ալիքների մէջ:

Ֆոնօգրաֆը իբրեւ միջոց աղուհսներին գրաւելու: — Հիւսիսային Ամերիկայի Մէն նահանգում մի գիւղացի մէծ յաջողութեամբ օգտւում էր ֆոնօգրաֆից աղուէներ որսալու համար: Տպաւու-

բելով ֆոնօդրաֆի մէջ թխսամօր կռկռոցն և ձագերի ծւծոցը, նա թազում է ֆոնօդրաֆը անտառում, իսկ յետոյ թակարդներ սարքելով՝ զոպանակով ֆոնօդրաֆը լարում է Աղեղջինս կէո ժամ շարունակ կռկռոցի և ծւծոցի նման ձայներ է հանում, այսպէս որ բազմաթիւ ազուէսներ հրապութուելով հաւաքւում են և ընկնում թակարդների մէջ։ Այս սրամիտ հնարդիտութեան շնորհիւ ամերիկացին կարճ միջոցում ապահովում է իրան։

Թանաքի լինը.—Հերսիսային Ամերիկայի Կոլորադօ նահանգի ամենահետաքրքրական վայրերից մէկն է թանաքի լինը, որի լայնութիւնը մօտ 40 ակր է և որ լցուած է թանաքանման հեղուկով։ Լճի մակերեսոյթը ծածկուած է հրաբխային մոխրի շերտով, մօտ կէս ոտնաչափ հաստութեամբ։ Տեղ—տեղ լճի խորութիւնը հասնում է 300 ոտնաչափի, բայց կան աեղեր, որտեղ անկարելի է խորութիւնը գտնել։ Լճին այս հեղուկը մատակարարող աղբիւրի մասին միայն ենթադրութիւն կայ և ոչ ըստ երեսոյթին չի իմասնում, թէ ինչից է բաղկացած այս սև հեղուկը։ Հնդկացիները պատմում են, որ նա գոյացած է հրաբուխների մէջ, դժոխվում, տանջուող վատ հնդիկների արիւնից։ Հեղուկը այս լից մի քանի անդամ տարել են հետազօտելու համար։ Բամբակեայ դօրծուածները, թրջուելով այս հեղուկի մէջ, պահպանում են նրա գոյնը մի քանի ամիս շարունակ, բացի սրանից նրանք փոքր ինչ կարծրանում են, կարծես թէ օսլայած լինեն։

Մի գիւտ Տեկորուրգեան անտառում.—Մի քանի ժամանակ առաջ Վեստֆալիայում, Տեկորուրգեան անտառում, գետինը փորելու ժամանակ մշակները տորֆի հաստ շերտերի մէջ դասնում են հիմնալի կերպով պահպանուած մի հին գերմանացի զինուորի դիակ։

Բժիշկներն ու մարդարան դիտնականները գալով գիւտի տեղը, այն եղրակացութեան ելան, որ գտնուած դիմկը նախնական տելտոններից մէկը պէտք է լինի, որոնց այնքան լաւ նկարագրում է Տակիտոսը։ Մարմինը տորֆի շնորհիւ ըոլորտին անարամ է մնացել։ գիտնականները չափեցին մարմնի երկարութիւնը, հանեցին նրա պատկերը, իսկ շորերը որոնք շատ ամուր էին մնացած, թէև դոյնը թռած, ուղարկուեցան Հաննովերի հնագիտական թանգարանը։

Ինչ որ ամենից գարմանալի է, այդ այն է, որ զինուարը թէև 2000 տարուց աւելի է հողի տակ գտնվում, բայց այնպէս է երկում, իրը թէ նոր է զմռսուել։ միայն կաշին քիչ սկացել է և տեղ տեղ կնճռառտուել։ իսկ առամները շատ սպիտակ են՝ մ'ուսցել, երկար մաղերը պահպանել են իրանց դեղեցիկ չէկ դոյնը։ Դիմագծերը խոշոր են և որոշ։

Գերմանացին կլինի մօտ երեսուն տարեկան, բարձրութիւնը հասնում է 1,85 մետրի։ Նա ծածկուած էր մութ—կլինամնադոյն բրդէ հաստ վերարկուով, որի վրայ դուրս էին բերուած զանազան նկարներ։ Ոտներին հագաւծ ունէր կաշուէ սանդալներ, որոնց երկարութիւնը մօտ ½ արշին էր։

Լուրեր Սվերդրուպի մասին.—Յունիսի 24-ին, Կ. տոմարով, ուղիղ չորս տարի լրացաւ այն օրից, երբ Նահսէնի հռչակաւոր ուղեկից կտպիտան Օտտո Սվերդրուլը հրաժեշտ տուաւ Խրիստիանիա քաղաքին և յայտնի «Քրամ» շողենաւով ճանապարհ ընկաւ դէպի հիւսիսային քենեռը։ Հաշուով այս էկսպեդիցիան երեք տարի պիտի տեէր, ուստի գեռ անցեալ տարի նրա մասին լուրերի էին սպասում։ 1899 թուին լեյտենանտ Պիտի սի էկսպեդիցիան վերջին անգամ տեսել էր «Քրամը», Քուլիէ Փիօրդում Գրենլանդիայի ափերի մօտ, բայց և այնպէս նորվեգիայում հաստատապէս համոզուած են, որ Սվերդրուպի էկսպեդիցիան, հինգ տարուայ պաշար ունենալով՝ ամենայն յաշողութեամբ կվերադառնայ։

Մի նոր գործիք.—Երիտասարդ ֆրանսիացի լինֆեներ Տրիւլսին նոր գործիք է հնարել, որին Ալեպտոսկոպ անուն է տուել։ Այս գործիքը հնարաւորութիւն է տալիս տեսնելու, թէ ինչ է կատարւում ջրի մակերեսոյթի վրայ, երբ նաւը դժոնւում է ջրի տակ։ Գործիքը նման է մի խողովակի, որի վերին ծայրը ջրին հաւասար մակերեսոյթի վրայ է լինում, իսկ սառըինը ամփոփուում է ջրի տակ լողացող նաւի ներսում։ Որոշեալ կերպով դասաւորաւած պրիզմաների օգնութեամբ ստացւում է մակերեսոյթի վրայ եղող առարկաների և կատարուող գործողութիւնների անդրադարձում։

Մի քանի շաբաթ առաջ ջրի տակ «Թելֆին» նաւակի վրայ ամենայն յաջողութեամբ կատարուեցան նորահնար գործիքի փորձերը ծովային նախարարի ներկայութեամբ։ Ալեպտոսկոպը

արդարացրեց հնարողի յոյսերը՝ շատ լաւ գործում էր, միջոց-  
տալով նաւակի մէջ եղողներին հետևելու այն բոլորին, ինչ ոք  
կատարւում էր ջրի մակերևոյթի վրայ:

Զինաց աստուծոյ պատժուիլը.—Զինաստանի Տայդենդօնգ նա-  
հանգոււմ երաշտ կար. նահանգապետը բազմաթիւ զոհեր էր մա-  
տուցանում վիշապների աստուծուն և հինգ լճերի ու չորս ծո-  
վերի վիշապին, աղաչելով, որ անձրև ուղարկեն. բայց նրա զո-  
հերը երեխ չէին ընդունւում և նրա աղաչանքները անհետանք  
էին մնում: Այն ժամանակ նահանգապետը զայրանում է և հրա-  
մայում մի թղթէ վիշապ պատրաստել: Մի քանի օրից յետոյ  
թղթէ վիշապը հանդիսաւոր կերպով դուրս է բերւում Շանխայի  
հարաւային գուներից, որտեղ նահանգապետը յայտնում է երկրն-  
քին, որ նա վճռել է վիշապին պատժել նրա համար, որովհետեւ  
նա մերժել էր երան աղաչող ժողովրդին անձրև ուղարկել: Սրա-  
նից յետոյ առաջ եկաւ դահիճը կարմիր շորեր հաղած, մօտեցաւ  
երաշտի վիշապին և եօթը տեղից նիզակով ծակեց նրան: Երկնքին  
և ուրեշ վիշապներին ուղղած աղօթքից յետոյ, նահանգապետը  
հրամայեց պատժուած վիշապին կրակի մատնել:

Աշերի յոգնածութեան դեմ միջոց.—Մի լրագիր հաղորդում է մի  
շատ հետաքրքրական միջոց աչքերի յոգնածութեան դէմ. այս մի-  
ջոցը շատ հասալակ է և մեղանից ամէն մէկը կարող է փորձել: Նրա  
հնարողը, որի անունը յայտնի չէ, հետևեալ կերպով դտաւ այդ  
միջոցը. մի անդամ ուշ երեկոյնան, երը նա ջանասիրութեամբ  
աշխատում էր և գրում: ստիպուած էր իւր պարապմունքը ընդ-  
հատել: որովհետեւ աչքերը սաստիկ յոգնել էին: Պատահմամբ  
նրա հայեացքն ընկաւ գոյնզգոյն մետաքսի փնջի վրայ, որ նրա  
կինը սեղանի վրայ էր թողել: Մետաքսի պայծառ գոյները զգալի-  
կերպով կազդուրեցին նրա յոգնած աչքերը, այնպէս որ մի քանի  
ըսպէից յետոյ նա հեշտութեամբ կարողացաւ դործը շարունակել:  
Այս բանից յետոյ նա սկսեց փորձեր անել: իւր գրասեղանի վրայ  
պայծառ մետաքսի զանազան փնջեր էր պահում և, ժամանակ-  
առ ժամանակ նրանց վրայ նայելով, այլ ևս աչքերի յոգնածու-  
թեւն չէր զգում:

Բնութեան մի տարօրինակ երեւոյք.—Պըոֆեսոր Ռուսսէլը, որ ամերիկացի գիտնականների հետ Անթիլեան կղզիների վրայ հետազօտութիւններ էր կատարում, հաղորդում է մի տարօւթիւնակ երեսոյթի մասին, որ նա տեսել է Սէն—Ալինցենտ կղզու վրայ:

Սուֆրիեր հրաբուխից քիչ հեռու գտնւում է Վալլիքու գետի հովիտը: Երբ պըսֆեսոր Ռուսսէլը մօտեցաւ այս հովտին, նսա առաջ բացուեցաւ մի աննման և վսեմ տեսարան: Հովիտը ամբողջ տարածութեամբ ծածկուած էր գոլորշու սիւներով, որոնք գուրս էին գալիս գետնի տակից, ինչպէս վիթխարի շոգեմեքենայի խցանքից, բարձրանալով մի քանի ոտնաչափ: Ամբողջ հովտի վրայ 15—20 մետր հաստութեամբ էջել էր հրաբխային ժայթուածք, որ արգելում էր մօտենալ գետին: Գետի մէջ ջուրը համելով հրաբխային այս տաք դանդուածին, սկսում էր եռ գալ և յետոյ գոլորշի դառնում: Ծուտով անձրև տեղաց և ամբողջ տեսարանը այնպիսի բարձր գոլորշու մէջ կորաւ, որ չուրջը այլ ես ոչինչ չէր երեւում: Ծոգին մեծամեծ ամպերի ձեռով բարձրանում էր մի քանի հազար ոտնաչափ վեր: Ծոգու այս հեղեղները գետնից այնպիսի ոյժով էին վեր քշուում, որ իրանց հետ բարձրացնում էին ահազին ու սիւներ, որոնք երեխ կազմուում էին հեղուկ ցեխից, միւնոյն ժամանակ մեծ շատրուաններ սկսեցին բանել, որոնք մի քանի ըստէի ընթացքում 30 մետր բարձրութեամբ էին խփում:

Սովորաբար այս տեսակ շատրուանները նոր հրաբուխի գոյացման նշան էին ընդունեում, բայց պըսֆեսոր Ռուսսէլը, յենուելով իւր գիտողութիւնների վրայ, մերժում է այդ տեսութիւնը:

Դունաւոր անձրեւ.—Քելդիայում և Անգլիայում մօտերս դիւտել են ընութեան հազուադիւտ երեսոյթներից մէկը. Անգլիայում տեղացել է գեղին անձրեւ իսկ Քելդիայում՝ ու: Թէ՛ մէկի և թէ միւսի ժամանակ սարսափելի վիթորիկ է եղել:

Ի՞նչ է նշանակում այս երեսոյթը. արդեօք գեղին զանգուածը չի բաղկացած ծծումբեց, որ քամին քշել բերել է ճաղատ սարի հրաբուխից (Մարտինիկա կղզուց) Խւրոպա: Սակայն գիտունները հեռու են այս ենթադրութիւնից: Անը Պարլիւլը կարծում է, որ վերոյիշեալ հրաբուխից գուրս վիժած մոխիրը Խւրոպա հասնելու համար մի ամբողջ ամիս պիտի ճանապարհորդէր: Այն էլ կայ, որ թէպէտ հրաբխային ժայթքումները սարսափելի են եղել:

բայց մոխիքը այնքան բարձր չէր նետւում, որպէս զե կարողանար մինչև Եւրոպա հասնել: Պարվելիլի կարծիքով, այս գեղին անձը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ջրի սավորական կաթիլների և գեղին փոշու խառնուրդ: այս գեղին փոշին էլ բոյսերից է վերև բարձրանում և քամին ցըռում է չորս կողմբ:

Ի՞նչ վերաբերում է սև անձրեցին, նա պարունակում է իւր մէջ դորժարանական մնացորդներ, որոնք դարձեալ սաստիկ քամու շնորհիւ վերև են շպրտում:

Խալիայում յաճախ կարմիր անձրեւ է դալիս. այսուեղ էլ անձրեւ կաթիլները միանում են այն աւազի հետ, որ սամումը Աահարայից Միջերկրական ծովի վրայով բերում է:

Եղանակի գուշակութիւնը.—1) Երբ արեւը ծագելիս շրջապատուած է թեթև, թափանցիկ ամպերով, երբ նա ոսկէ գնտի նման է, նշանակում է թէ լաւ օք կլինի. իսկ երբ ծագելիս ամպերով է շրջապատուած՝ անձրեւ կդայ:

2) Պարզ լուսինը գուշակել է տալիս լաւ եղանակ. լուսնի շուրջը ծիածանագոյն շրջանը խոնաւ եղանակի նշան է. եթէ շրջանը շատ մեծ է, գիւղացիների կարծիքով շուտառվ անձրեւ կդայ: Լուսնի գոյնն էլ նոյնապէս մեծ նշանակութիւն ունի եղանակը գուշակելու համար. մանաւանդ հարաւային երկրների բնակեները դրան մեծ նշանակութիւն են տալիս: Խտալական առածն սասում է. «Գունատ լուսինը անձրեւ է բերում, կարմիքը՝ քամին իսկ սպիտակը՝ պայծառ եղանակ»:

3) Եթէ երկնքի վրայ բազմաթիւ ցըռուած ասդիր են երեսում, լաւ եղանակ կլինի կամ ցուրտ կանի. իսկ եթէ նրանք տեղ—տեղ միայն մութ երկնքի վրայ փայլում են, եղանակը կիրախուի և կամ անձրեւ կդայ: Ամառը եթէ Յարդագողի նանապարհը պարզ նկատելի է, լաւ եղանակ է խոստանում:

4) Վարդագոյն երկինքը արևամտին յաջորդ օրուայ համար լաւ եղանակ է խոստանում, գեղինը՝ քամի, բաց գեղինը՝ անձրեւ, կարմիքը՝ սաստիկ քամի և անձրեւ: Արեածագին գուշագոյն կամ բաց կապտագոյն երկինքը նշան է լաւ եղանակի: իսկ մութ—կապտագոյնը՝ քամու. եթէ նա կարմիր և երփներանգի գոյն ունենայ, օրը առանց անձրեւ և քամու չի անցնի:

5) Պայծառ ծիածանը խոնաւ եղանակի նշան է. եթէ առաւտեան է երեսում, պէտք է սպասել, որ լաւ եղանակ կանի, իսկ երեկոյեան՝ անձրեւ կրերի:

6) Թափանցիկ ամպերը լաւ եղանակի նշան են. ծանը, գէք

ամպերը՝ քամու, արագ իջնողները՝ անձրեի: Եթէ ամպերը զանազան ուղղութեամբ են գնում, հաւանական է, որ անձրեւ կդայ կամ քամին կփոխուի: Երբ վիերաձեւ ամպերը նեղ և երկար շերտի նման են ձգւում, դա նշան է թէ շուտով մըրիկ կամ անձրեախառն քամի կլինի: Ենցածեւ ամպերը նշան են, որ մօտ օրերում երկարատեւ անձրեներ կդան. Ենցային—կոյտանման ամոնքը ենթագրել են տալիս յանկարծակի անձրեւ կարկուտի հետ միասին, տեղատարափ կամ արագ անցնող անձրեւ:

- 1) Եթէ եղեամը մառախուղ է դառնում, անձրեւ կդայ:
- 2) Եթէ քամին ճանապարհների վրայ փոշի է պտտեցնում, փութորիկ կամ անձրեւ կլինի:
- 3) Առաւօտեան որոտումը քամի է դուշակում, կէսօրին՝ անձրեւ, երեկոյեան մըրիկ. կայծակը ձմեռ ժամանակ նշան է քամու կամ մըրիկ:



Փարիզից սացել են հետեւեալը՝ «Արարատ»-ի էջերում սպազրելու նամար.

Ուրախութեամբ կիմանանք, որ ամենայն Հայոց կաթուղիկոսը Ս. Էջմիածնայ վանքը զարդանկարել տալու նպատակով, մասնաւոր նամակով մ' իր մօտ հրաւիրած է Բարիզաբնակ հայ տաղանդաւոր զարդանկարիչ պարոն Պէղիրճեան:

Որքան որ ալ ամեն հայ արուեստասէր հայրենակիցներու ծանօթ է պ. Պէղիրճեան, այնու հանդերձ շահեկան կը համարենք այս առթիւ մեր կողմանէ մէկ երկու խօսք ընել անոր նկարագրի, դործունէութեան և ընդդրկած մասնաճիւղին ընդարձակութեան մասին:

Պ. Պէղիրճեան արուեստագէտ մը ըլլալէ առաջ ճըշ մարիտ հայու օրինակելի տիպար մ' եղած է և անձնուել անդամ մարդկութեան: Իր դուստրն ու մանչ զաւակը իր հոգւովը կը թելէ ու դաստիարակելէ զատ, որոնք այսօր հրապարակի վրայ կը ճանչցուին իբրև արուեստագէտներ և պատուաւոր գիրք ունին օտարազգի շըշան ներու մէջ, չէ մոռցած իր կարողութեան չափովը նիւթառ պէս և բարոյապէս մասնակցել մարդասիրական բաղմաթիւ